«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

N 09/021-386

«04» 03 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանք (ներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում ՇՀԱՊՁԲ-11/12-ԳԱԿ-15/2:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Կոմիտաս 54բ հասցեով, մինչև 2015թ. մարտի 16-ը, ժամը 10:15-ն: Ընթացակարգի հայտերն ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Է. Բուռնուչյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի շենքում, ք. Երևան, Կոմիտաս 54բ հասցեում, N 108 սենյակում, 2015թ. մարտի 16-ին, ժամը 10:15-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների մատակարարման (որոնք կազմված են՝ 2 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ gak@armeps.am:

Հարգանքով՝

պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հ. ԹՈՒՆՅԱՆ

*Կատարող՝*
*Մասնակիցների գրանցման բաժին*
*Գլխավոր մասնագետ Է. Բուռնուզյան*
*Հեռ. 28-93-25*